REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔ

հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 163
30 հոկտեմբերի 2015թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Պետրոսյան

՝Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 27 -ի արտահերթ նիստի որոշումները :

Առդիր. 1 ֆայլ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ. աշխ. քարտուղար
Վ. Փայտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք.
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<27>> հոկտեմբերի 2015թվականի N 46 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով ,համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է* .

Հաստատել Մայակովսկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 27-ի արտահերթ 14-րդ նիստի **օ ր ա կ ա ր գ ը** .

1. Հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ

ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ

ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2015թ. հոկտեմբերի 27
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<27>> հոկտեմբերի 2015 թվական N 47-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 147 դրական եզրակացությունը , համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արմեն Մեխակի Ալմոյանի սեփականությունը հանդիսացող Մայակովսկի 07-043-0138-0057 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.17645 հա մակերեսով հողամասից (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20092012-07-0393, տրված 2012 թվականի սեպտեմբերի 20-ին) 0.02 հա հողամասը՝ համաձայն կից ներկայացվող հողամասի իրադրության հատակագծի, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2. Առաջարկել Արմեն Մեխակի Ալմոյանին , հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը եռամսյա ժամկետում մուծելու համայնքի բյուջե:

3. Համայնքի ղեկավարին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երկրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողամասը երեք տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում՝ սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման նախագիծ,

3)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության նախարարություն և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

**Կողմ (5)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ

ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible] ԲԱՐՍԵՂՅԱՆ

2015 թ հոկտեմբերի 27
Գ. Մայակովսկի